ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-2

« ՇՀԾՁԲ-15/1-ՀՀՔԿԴ-16/7» ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի (ARMEPS) միջոցով շրջանակային համաձայնագրերով գնումներ կատարելու ընթացակարգով ՀՀ Քննչական կոմիտեի կարիքների համար ինտերնետային կապի ծառայությունների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 01.09.2016թ. ժամը 10^{00}-ին, ՀՀ Քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Գ. Արշակյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Վ.Հարությունյանը, Վ.Մկրտչյանը, Մ.Անտոնյանը, Ե.Հովհաննիսյանը և քարտուղար Մ.Մուրադյանը:

Օրակարգ

Հայտերի բացման և գնահատման մասին

1.Հայտեր ներկայացրած և չներկայացրած մասնակիցների անվանումները և գտնվելու վայրի հասցեները

«ՇՀԾՁԲ-15/1-ՀՀՔԿԴ-16/7» ծածկագրով ընթացակարգի ներկայացրած հայտերը բացվել են ARMEPS գնումների էլեկտրոնային համակարգի միջոցով հրավերով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետին.

Ա) հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

1. **«ԱրմենՏել» ՓԲԸ (ք. Երևան, Ահարոնյան 2)**

Բ) հայտ չեն ներկայացրել համակարգում 01.09.2016թ.-ի դրությամբ գրանցված մնացած մասնակիցները:

2. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին

2.1. **«ԱրմենՏել» ՓԲԸ** կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

3.Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերի պայմաններին համապատասխանության վերաբերյալ

3.1 **«ԱրմենՏել» ՓԲԸ** կողմից ներկայացված հայտում /հայտում առկա փաստաթղթերում/ չեն **պահպանվել հրավերի 1-ին մասի 7.9 կետի պահանջը:**

4. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը

Հ/Հ	Ապրանքի անվանումը	Նախահաշվային գին /ՀՀ դրամ/	**Մասնակիցների անվանումները և ներկայացրած գները՝ առանց ԱԱՀ-ի /ՀՀ դրամ/**
			«ԱրմենՏել» ՓԲԸ
1	**Ինտերնետային կապի ծառայություն**	**165000**	175000
2	**Ինտերնետային կապի ծառայություն**	**82500**	----------

5. Տեղեկություններ հայտերի հետկանչման կամ փոփոխությունների, հայտերի վերաբերյալ կատարված հարցումների մասին

-Հայտերի հետկանչում կամ փոփոխություններ, հայտերի վերաբերյալ կատարված հարցումներ և պատասխաններ չեն եղել:

6. Հանձնաժողովը որոշեց՝

1. Մերժել **«ԱրմենՏել» ՓԲԸ** կողմից ներկայացված հայտերը՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի(այսուհետ՝ Կարգի) **44-րդ կետի 4-րդ ենթակետը**:
2. Ընթացակարգը հայտարարել չկայացած :

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

Մասնակցում էին

Հանձնաժողովի նախագահ _____ Գ. Արշակյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Վ.Հարությունյան

_____ Վ.Մկրտչյան

_____ Ե.Հովհաննիսյան

_____ Մ.Անտոնյան

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Մ.Մուրադյան